Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 39, ՄԱՍ 2 և N 40

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2009թ. մայիսի 8-ին ժամը 14:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի նախարար
Սամվել Ավետիսյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդ.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Ռուբեն Խաչատրյանը	«Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամի տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ
Արամայիս Գրիգորյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար

Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Հակոբ Պետրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Մարինա Քուշքյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի աշխատակից
Ավետիք Ղուկասյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Արա Հովսեփյանը ներկաներին հիշեցրեց, որ ապրիլի 17-ին կայացած կառավարման խորհրդի նիստն ընդհատվել էր և առանց քննարկման էր մնացել օրակարգի վերջին հարցը՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը: Քանի որ այդ հարցն ուղղակի առնչություն ունի նոր օրակարգի 1-ին հարցի հետ, ուստի Արա Հովսեփյանն առաջարկեց չքննարկված հարցը տեղափոխել նոր օրակարգ՝ որպես առաջին հարցի 2-րդ մաս և ապրիլի 17-ի N 39 նիստի 2-րդ մասը համարել փակված:

Առաջարկն ընդունվեց միաձայն և 39-րդ նիստի 2-րդ մասը համարվեց փակված:

Նիստի օրակարգում հաստատվեցին հետևյալ հարցերը.

1. ա/ ՀՄԿ-ին ներկայացվող Արտահերթ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.

ա/ Արտահերթ հատկացման հայտ և Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
բ/ Ամփոփ հաշվետվություն:

1. բ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի իրականացման ներկա ընթացքի մասին տեղեկատվության ներկայացում:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի գնումների վերանայված պլանի քննարկում և հաստատում:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ձրից դեպի շուկա բաղադրիչի կառուցվածքային ամրապնդման ենթաբաղադրիչը գնահատելու նպատակով ջրօգտագործողների ընկերությունների (ՁՕԸ) և ջրօգտագործողների հետազոտության անցկացման խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

4. Այլ հարցեր:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե արդյո՞ք ՀՀ պետական բյուջեից տրամադրված և դեռևս չսպառված 1,4 մլրդ. դրամը կծախսվի մայիս ամսին:

Արա Հովսեփյանը հաստատեց այդ հանգամանքը և ավելացրեց, որ արտահերթ հատկացման հայտով ներկայացվող 1,580,741 ԱՄՆ դոլարը (589 մլն դրամ) անհրաժեշտ է հունիս ամսվա ճանապարհաշինական աշխատանքների ֆինանսավորման համար:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե արդյո՞ք ռիսկ կա, որ ՀՄԿ-ն չի հաստատի տվյալ արտահերթ հատկացման հայտը:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ ՀՄԿ՝ 2009թ. մարտի 11-ին կայացած խորհրդի նիստի ժամանակ որոշում էր կայացվել պահպանել ճանապարհաշինության համար տրամադրվելիք գումարների սառեցման մասին նախկինում կայացված որոշումը և մինչև հունիս հրավիրել նոր արտահերթ նիստ ՀՀ կատարողականը քննարկելու համար:

Արա Հովսեփյանը նաև ավելացրեց, որ ներկայումս ՀՄՀ-Հայաստանը և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը այլ հնարավոր դոնոր կազմակերպությունների հետ քննարկում են ճանապարհաշինության առաջին փաթեթում ընդգրկված աշխատանքների հետագա ֆինանսավորման հնարավորության հարցն այն դեպքի համար, եթե ՀՄԿ-ն հրաժարվի տրամադրելու այդ ֆինանսավորումը: Այդ մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է օրակարգի 1-ին հարցի բ/ կետի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** ա/ հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող Արտահերթ Հատկացման հայտը և դրան կցվող փաստաթղթերը, ինչպես նաև, բ/ ի գիտություն ընդունել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի իրականացման ներկա ընթացքի մասին տեղեկատվությունը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց տեղեկանքի 2-րդ կետի վրա, համաձայն որի գնումների պլանում ավելացել է «Աջակցություն պոմպակայանների վերականգնման նպատակով ստացված առաջարկների տեխնիկական գնահատմանը» տողը:

Այս տողի ավելացումն ըստ էության պոմպակայանների վերականգնման աշխատանքների մրցութային փաստաթղթերին ՀՄԿ-ի հավանության տրամադրման նախապայման է հանդիսացել: ՀՄԿ-ն պետք է իրավունք ունենա հաստատելու տեխնիկական գնահատման հանձնաժողովի (ՏԳՀ) վերջնական կազմը, որին հանձնարարվելու է գնահատել պոմպակայանների մրցութային փաստաթղթերի համաձայն ստացված առաջարկները: ՏԳՀ-ում որպես քվեարկող անդամներ պետք է ընդգրկվեն միջազգային փորձագետներ, որոնք կկարողանան գնահատել յուրաքանչյուր առաջարկի նախագծային մասնագրերը: Մասնավորապես, ՏԳՀ-ում որպես քվեարկող անդամներ պետք է ընդգրկվեն հետևյալ ընկերություններից ընտրված առնվազն երեք տեխնիկական ներկայացուցիչներ՝ Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի շինարարության վերահսկող (CES), Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (Mott McDonald) և/կամ Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի նախագծող (GITEC) կազմակերպություններից:

Ներսես Երիցյանն առաջարկեց սահմանել մրցույթների իրականացման հստակ ժամանակացույց, որը հնարավորություն կտա վերահսկել մրցույթների իրականացման գործընթացը ժամանակային տեսանկյունից և խուսափել ձգձգումներից:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ այդպիսի ժամանակացույց առկա է յուրաքանչյուր գնման ժամանակ: Մասնավորապես պոմպակայանների վերականգնման մրցութային հայտերի ներկայացման հրավերը ուղարկվել է մայիսի 5-ին և վերջնաժամկետ է սահմանվել 2009թ. հուլիսի 14-ը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հանձնարարեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին ՀՀ էկոնոմիկայի նախարար պարոն Ներսես Երիցյանին ներկայացնել այդ ժամանակացույցը:

Արա Հովսեփյանը նաև հայտնեց, որ գնումների պլանում առկա է ավտոմեքենայի գնում նախատեսող տողը, սակայն ՀՄՀ-Հայաստանը դեռևս ձեռնամուխ չի լինի այդ գնման իրականացմանը:

Ներսես Երիցյանը հայտնեց, որ չափազանց կարևոր է իրականացնել համապատասխան վերլուծություն պարզելու համար, թե ՀՀ շինարարական ստանդարտներից առաջադեմ եվրոպական ստանդարտների անցումը որքա՞ն գումարով կավելացնի յուրաքանչյուր շինարարության արժեքը:

Գուրգեն Սարգսյանը նշեց, որ նմանատիպ վերլուծություն կատարելու փորձ արվել է, որը ցույց է տվել, որ համապատասխան շինարարության արժեքն ավելանում է մոտ 20-30%-ով:

Հակոբ Պետրոսյանը ներկայացրեց, որ, օրինակ՝ ճանապարհաշինության դեպքում հիմնական խնդիրն առնչվում է ոչ միայն ճանապարհածածկին, այլ նաև հողային պաստառին: Մասնավորապես՝ Խորհրդային միության ժամանակաշրջանում հողային աշխատանքերն իրականացվել են ցածր որակով և դա է հանդիսանում ճանապարհների շուտ շարքից դուրս գալու հիմնական պատճառը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե որքանո՞վ կավելանա մեկ կմ ճանապարհի արժեքը, եթե փոխվի հողային աշխատանքների պաստառը:

Հակոբ Պետրոսյանը պատասխանեց, որ մեկ կմ ճանապարհի արժեքը կավելանա մոտ 5-ից 6 անգամ:

Ներսես Երիցյանը սակայն մեջբերեց, որ այս թվերը հիմնավորված չեն լուրջ մասնագիտական ուսումնասիրություններով, որի անհրաժեշտությունը սակայն ակնհայտ է:

Արա Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստանը պատրաստ է աջակցել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը այդպիսի ուսումնասիրություն կատարելու գործում՝ տրամադրելով անհրաժեշտ մասնագիտական ռեսուրսներ:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հանձնարարեց ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի հետ համատեղ աշխատել և կառավարման խորհրդի հաջորդ նիստին տեղեկատվություն ներկայացնել այդ ուսումնասիրության համար անհրաժեշտ ժամկետների և գումարի վերաբերյալ:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի գնումների վերանայված պլանը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետը նշեց, որ որոշակի վերապահումներ ունի Ավագ Սոլյուշնս ընկերության կողմից իրականացվող հետազոտությունների արդյունքների վերաբերյալ, քանի որ վերջիներիս կողմից, օրինակ՝ ՋՕԸ-երի ինքնածախսածածկման տոկոսի հաշվարկման վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները ոչ հավաստի են եղել:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ այս առաջադրանքի իմաստն, ըստ էության, ՀՄՀ-Հայաստան ծրագրի Կառուցվածքային ամրապնդում բաղադրիչի ազդեցության գնահատումն է: Միաժամանակ նշվեց, որ ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն և ինքը մասնավորապես չեն ծանոթացել տվյալ աշխատանքների տեխնիկական առաջադրանքի հետ:

Արմեն Գևորգյանն առաջարկեց հաստատել այս հարցը՝ հանձնարարելով ՀՄՀ-Հայաստանին ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ պարոն Անդրանիկ Անդեասյանին ներկայացնել համապատասխան տեխնիկական առաջադրանքը և մեկ շաբաթվա ընթացքում վերջինից դիտողություններ չստանալու պարագայում ձեռնամուխ լինել պայմանագրի ստորագրմանը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի կառուցվածքային ամրապնդման ենթաբաղադրիչը գնահատելու նպատակով ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) և ջրօգտագործողների հետազոտության անցկացման խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը:

Օրակարգի այլ հարցերի շրջանակում Ներսես Երիցյանը ներկայացրեց 2008թ. մայիսի 4-ով թվագրված ՀՄԿ փոխտնօրենի տեղակալ տիկին Ֆրենսիս Ռեյդի կողմից իրեն ուղղված նամակը, մասնավորապես ներկաների ուշադրությունը հրավիրելով նամակում ներկայացված՝ 17 պոմպակայանների կառուցման համար հավելյալ երաշխիք հադիսացող ՀՀ կառավարության քայլերին:

Ներսես Երիցյանը նշեց, որ նամակում ամրագրված է, որ Կառավարությունը պետք է պատրաստ լինի առանձնահատուկ քայլեր ձեռնարկելու, որպեսզի երաշխավորի պոմպակայանների վերանորոգման աշխատանքների ավարտը ժամանակին, որը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- Նպաստել ոռոգման այլընտրանքային ժամանակացույցերի և ջրամատակարարման այլընտրանքային ուղիների օգտագործմանը՝ հնարավորություն ստեղծելով ավարտելու ներկայումս ոռոգման սեզոնից դուրս իրականացվող աշխատանքները;

- Արագացնել մաքսային ընթացակարգերը ներմուծվող ապրանքների և ծառայությունների առումով;
- Նպաստել բազմահերթափոխային և գիշերային աշխատանքների ժամանակացույցերի ստեղծմանը (որոնք պետք է համապատասխանեն Միջկառավարական համաձայնագրով նախատեսված բնապահպանական և անվտանգության չափանիշներին);
- Կապալառուից(ներից) ստանալ աշխատանքների ավարտման վերաբերյալ հավաստում բանկային երաշխիքի կամ նմանատիպ այլ մեխանիզմների տեսքով; և/կամ;
- Ի սկզբանե պատրասատկամություն հայտնել տրամադրելու լրացուցիչ ֆինանսավորում, ինչը կերաշխավորի այն պոմպակայանների վերանորոգման աշխատանքների ավարտը, որոնց ռիսկը ՀՄԿ-ն բարձր է համարում:

Առաջին կետով ՀՄԿ-ն անհրաժեշտ է համարում, որպեսզի ՀՀ կառավարությունը պոմպակայանների վերականգնման աշխատանքների իրականացման ժամանակ անհրաժեշտության դեպքում սահմանի ոռոգման այլ ժամանակացույց կամ ոռոգման այլընտրանքային ուղիներ:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ հատկապես մեծ պոմպակայանների դեպքում հնարավոր չէ պոմպակայանով մղվող ջուրն ուղղել այլընտրանքային ուղով, սակայն հնարավոր է ոռոգման այլ ժամանակացույց սահմանել և անհրաժեշտության դեպքում չշահագործել այս կամ այն պոմպակայանը:

Արա Հովսեփյանը նշեց, որ խոսքը հիմնականում վերաբերում է Մխչյան 1 պոմպակայանի համապատասխան ճիշտ տեխնիկական լուծումներ գտնելու հարցին: Մասնավորապես՝ հնարավորինս երկար շինարարական սեզոն ունենալու նպատակով, անհրաժեշտության դեպքում Մխչյան 1 պոմպակայանից սնվող տարածքի համար ջրամատակարարում ապահովել այլընտրանքային ոռոգման աղբյուրից:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ ՀՄԿ-ի այս առաջարկն ընդունելի է և անհրաժեշտության դեպքում ոռոգման այլ ժամանակացույց կսահմանվի:

Մաքսային ընթացակարգերի արագացման վերաբերյալ ՀՄԿ-ի պահանջը ՀՀ Վարչապետը ևս համարեց ընդունելի և հանձնարարեց Ներսես Երիցյանին պատրաստել և ՀՀ Վարչապետին ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ուղղված համապատասխան հանձնարարական:

Արմեն Գևորգյանն առաջարկեց ընդունել մաքսազերծման պարզեցված ընթացակարգ, որը նման կլինի «Լինսի» հիմնադրամի կողմից կիրառվող փորձին, մասնավորապես՝ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին ուղղված համապատասխան հանձնարարականում ամրագրել, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում ներմուծվող ապրանքների և սարքավորումների մաքսային ձևակերպումներն անհրաժեշտ է իրականացնել մեկօրյա ժամկետում:

ՀՀ Վարչապետը դրական արտահայտվեց նաև կապալառուի բազմահերթափոխային և գիշերային աշխատանքների ժամանակացույցերի ստեղծման և վերջիններից աշխատանքների ավարտման վերաբերյալ հավաստման՝ բանկային երաշխիքի ստացման գաղափարին՝ նշելով, որ այդ հարցին արդեն իսկ կառավարման խորհուրդը դրական եզրակացություն էր տվել նախորդ նիստի ընթացքում:

ՀՄԿ-ի այն պահանջի վերաբերյալ, որ աշխատանքների մեկնարկից առաջ ՀՀ կառավարությունը պետք է պատրաստակամություն հայտնի ֆինանսավորելու այն աշխատանքները, որոնք չեն ավարտվի մինչև Համաձայնագրի ավարտը, այն է՝ 2011թ. սեպտեմբերի վերջը, նշվեց, որ նման անհրաժեշտություն կառաջանա այն պարագայում, եթե աշխատանքները նախատեսված ժամկետներում չավարտվեն:

Արա Հովսեփյանը վստահություն հայտնեց, որ եթե աշխատանքներն ընթանան համաձայն նախատեսված պլանի և կատարվեն վերոհիշյալ նախապայմանները, ապա ըստ աշխատանքների իրականացման համար սահմանված ժամանակացույցի բոլոր 17 պոմպակայանների վերականգնման աշխատանքները նախատեսված ժամկետներում կավարտվեն:

Ներսես Երիցյանը ավելացրեց նաև, որ դեռևս ամենամեծ խնդիրը հանդիսանում է նախագծերում առկա թերություններն ու բացերը:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ պոմպակայանների դեպքում այս խնդիրն այնքան էլ էական չէ, քանի որ վերջնական նախագծումը և տեղադրումն իրականացվելու է միջազգային ընկերությունների կողմից, իսկ պոմպակայանների ներմուծումը միանշանակ իրականացվելու է առաջադեմ երկրներից:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց** հավանություն տալ ՀՄԿ-ի կողմից 2009թ. մայիսի 4-ին ՀՀ էկոնոմիկայի նախարար պարոն Ներսես Երիցյանին ուղղված նամակում ամրագրված 5 կետերին:

Օրակարգի այլ հարցերի շրջանակում Անդրանիկ Անդրեասյանը ներկաներին տեղեկացրեց, որ ներկայումս ՀՀ կառավարությունը համագործակցում է նաև Համաշխարհային բանկի հետ և համապատասխան ֆինանասական ռեսուրսներ է ներգրավում դեպի ոռոգման ոլորտ: Բավականին արդյունավետ կլինի, եթե հնարավոր լինի օգտագործել ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում մշակված և ծրագրի շրջանակներում չկառուցված ոռոգման օբյեկտների նախագծերը: Միաժամանակ առաջարկվեց ՀՄՀ-Հայաստանի հետ քննարկել Թալինի և Արմավիրի ջրանցքների վրա Համաշխարհային բանկի միջոցներով վերականգնման աշխատանքների իրականացման հնարավորությունը:

ՀՀ Վարչապետը դրական գնահատեց այս մոտեցումը և առաջարկեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի հետ համատեղ քննարկել ներկայացված առաջարկները:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը